

ՏԱՅՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ, Պատմական գիտությունների դոկտոր
Հեռուստատեսային մի թողարկման հետքերով



Այնպես է ստացվել, որ մեր ժամանակներում ամենափնտրված բաներից մեկը պրոֆեսիոնալիզմն է: Եվ երբ հեռուստատեսային հանդիպում ես պրոֆեսիոնալի, մտովի նախապատրաստվում ես, որ ակնդիր ես լինելու ուշագրավ ելույթի, ձեռք ես բերելու նոր գիտելիքներ, կամ էլ թարմացնելու ես հին իմացություններդ: Ավաղ, միշտ չէ այդպես լինում: Նման մի իրողության էլ ցանկանում եմ անդրադառնալ ստորև:

«Շանթ» հեռուստաընկերությունը ձեռնարկել է «Հայկական աշխարհ» հաղորդաշարը, որտեղ, օգտագործելով Մփյուռքի հայկական համայնքների ներուժը եւ հեռուստակամրջի տեխնիկական հնարավորությունները, անդրադառնում է հայությանը հուզող տարաբնույթ խնդիրների: Մտացվում է գրեթե «համահայկական» քննարկում, համենայն դեպս տասնյակ, եթե ոչ հարյուր հազարավոր մարդիկ, դիտում են այդ հաղորդաշարը: Մա նշանակում է, որ լսարանն իրոք մեծ է, ինչը ենթադրում է, որ ելույթ ունեցողները պետք է առնվազն լինեն հարցի իրական գիտակներ, մատուցվող տեղեկատվությունը լինի հավաստի, վարքը ինչպես ասում են, «չափած-ձեւած»:

Այս տարվա փետրվարի 3-ի հաղորդումը նվիրված էր իրոք կարեւոր մի հարցի. Վրաստանը պետական մակարդակով ձեռք է բերել համաձայնություն Թուրքիայի հետ այն մասին, որ հաղորդավարի ներկայացմամբ, «Արեւմտյան Հայաստանի Տայքի նահանգում պետք է վերականգնվեն չորս վրացական եկեղեցիներ, դրա փոխարեն վրացիները խոստանում են վերականգնել կամ կառուցել Վրաստանում չորս մզկիթ»: Հարցը բազմակողմանի է, ու թերեւս դրանով էր պայմանավորված, որ քննարկմանը հրավիրված էին հոգեւորական գործիչ (Հայ Առաքելական եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի արեւմտյան թեմի առաջնորդական ընդհանուր փոխանորդ Տաճատ ծայրագույն վարդապետ Յարդյան), քաղաքական գործիչ («Ռուս-հայկական համագործակցություն» ՀԿ ղեկավար, «Հայ Դատի» Մոսկվայի գրասենյակի պատասխանատու Յուրի Նավոյան), մշակութային գործիչ (լուսանկարիչ, Ս. Փարաջանովի տուն-թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյան) եւ գիտության գործիչ (կովկասագետ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Պարույր Մուրադյան):

Շոշափվեցին բազմաթիվ հարցեր, որոնց քննությանն էլ՝ ինձ երբեմն թույլ տալով դրանք խմբավորել, ես անդրադառնում եմ ստորև:

Տաճատ վարդապետը, նկատելով, որ «այս քաղաքական վերաբերումը վրացիներու կողմե հայկական ճարտարապետական հուշարձաններու հանդեպ նոր չէ», հիշեց ճարտարապետ Մարությանին, «որ Տայքի հուշարձանների մասին գրած էր (Երեւանի մասնագետները ինձմե լավ գիտեն), 70-ական թվականներին այդ հրատարակությունը հրապարակ էլած էր, սակայն... հրապարակեն հավաքված էին օրինակները այդ հրատարակության: Մակայն հեղինակը, ... Վենետիկ այցելության [Ժամանակ] այդ գրքին օրինակ մը, նմուշ մը ինձի տվավ, եւ ես կհիշեմ, ուժեղ գրախոսականով մը էլույթ ունեցա Վենետիկի «Բազմավեպի» մեջ: Հարցը այս էր, թե Մարության կաշտպաններ [Տայքի հուշարձանները, մասնավորապես Իշխան, Օշկ եւ այլն] բոլոր այն խեղաթյուրումները [խեղաթյուրումներից, որ կատարում էին վրաց հետազոտողները], որոնց [հայկական հուշարձանների] վրա հայկական արձանագրությունները ջնջված եւ ներկերով վրացերեն արձանագրություններ եղած են, հավելյալ փաստելու համար, որ դրանք վրացական ճարտարապետության ներկայացուցիչներ են»: Վարդապետի խոսքի երկրորդ հատվածին «ու՛ֆ, ու՛ֆ» ցածրաձայն բացականչություններով արձագանքող Պ. Մուրադյանը, խոսք վերցնելով, արեց մի շարք դիտարկումներ: Այսպես, դիմելով Հայր սուրբին, նա նկատեց. «Ձեր տեղեկությունները միշտ չէ, որ ստույգ են: Տիրան Մարությանի գիրքը ես հրաշալի գիտեմ, ավելին ասեմ՝ երբ նա դոկտորական էր պաշտպանում, ես եմ եղել նրա ընդդիմախոսը եւ դոկտորական տվողը: Տիրան Մարությանի գիրքը արգելված չի եղել, չի այրվել ոչ մի անգամ: Տիրան Մարությանը ոչ միայն հայերեն հրատարակեց, տարիներ հետո էլ նույն Խորին Հայքը հրատարակեց նաեւ ռուսերեն»:

Ակնդիրը նման գնահատական լսելով, առաջին հերթին թերեւս պետք է մտածի, որ ճարտարապետ Տ. Մարությանը վստահաբար ժամանակին սուտ տեղեկություններ է ներկայացրել Տաճատ վարդապետին իր գրքի ճակատագրի մասին: Այստեղ ես պետք է հակադարձեմ պրոֆ. Մուրադյանին, որ ի՛ր «տեղեկությունները ստույգ չեն»: Եվ քանի որ պրոֆեսորը աղբյուրագետ է, պետք է ասածս փաստեմ գրավոր իսկ աղբյուրներով: Ժամանակին՝ 2003 թ., Տ. Մարությանը Պ. Մուրադյանին էր նվիրել իր հեղինակած վեբջին (թվով վեցերորդ) մենագրությունը «Հայ դասական ճարտարապետության ակունքներում» վերտառությամբ, որի էջ 261-262-ում գրված է. «Տողերիս գրողի «Տայքի ճարտարապետական հուշարձանները» գրքի լույս ընծայումը 1970 թ. երկու տարով կասեցվելուց հետո, լույս տեսավ 1972 թ., սակայն նրա 5000 օրինակներից մոտ 4000-ը ոչնչացվեց Հայաստանի եւ Վրաստանի կոմկուսների կենտկոմների գաղափարական գծով քարտուղարներ Ռ. Խաչատրյանի եւ Ստուրուայի ջանքերով: Նույն գրքի նոր հրատարակությունը չխանգարվելու նպատակով նախկին անվան փոխարեն վերնագրվեց «Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք», հասկացնելու համար ում որ պետք էր, որ երկիրը հայկական երկիր է եւ այդ անունը կնքել են ոչ թե մարությանները, այլ բյուզանդացիները...»: Գրքի նման ճակատագրից հայրս շատ էր նեղվում, նույնիսկ միկրոֆինֆարկտ անցկացրեց: Գրքի ոչնչացման փաստը հանրահայտ իրողություն էր ժամանակի մտավորականության համար, այսօր է, որ շատերը դրա մասին պարզապես չգիտեն: Մեր տանն անգամ մշակվել էր հատուկ կարգ, երբ տպարանի բանվորները՝

նախօրոք զանգահարելով, գրքի փրկված օրինակները մեկ-մեկ, երկու-երկու դուրս էին բերում ու պայմանավորված տեղում փոխանցում էին մորս:

Նկատեն, որ Տ. Մարությանը միակը չէր, որ արժանանում էր նման «ուշադրության» ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության կեղծ ջատագովների կողմից: Հայրենական մեծ պատերազմին հաջորդող ամիսներին, երբ դրված էր Արեւմտյան Հայաստանի հողերի վերադարձման հարցը, վրաց գիտնականները ԽՄԿԿ ԿԿ-ի օրգան «Պրավդայում» հանդես եկան հողվածով («Թուրքիայի նկատմամբ մեր ունեցած օրինական պահանջների մասին»), որտեղ մատնանշում էին, որ հայկական ներկայացվող տարածքների մի մասն իրականում վրացական է (Արդահան, Արդվին, Օլթի, Թորթում, Սպեր, Բաբերդ, Գյումուշխանե): Ու հանկարծ 1946 թ. Երեւանում լույս է տեսնում ճարտարապետ Ն. Տոկարսկու ռուսերեն մենագրությունը՝ «Հին Հայաստանի ճարտարապետությունը» (381 էջ): Վրաց մասնագիտական (համոզված եմ, որ նաեւ քաղաքական) շրջանակներում այն առաջին հերթին ընկալվում է իբրեւ ոսնձգություն «իրենց» տարածքների նկատմամբ: Հարվածը չի ուշանում. 1947 թ. լույս է տեսնում «Պրավդա» թերթի վերոնշյալ հողվածի համահեղինակներից ակադեմիկոս Ս. Ջանաշիայի ռուսալեզու բրոշյուրը բավականին խոսուն վերնագրով՝ «Պատմական ճշմարտության խեղաթյուրման մի օրինակի մասին: Ն. Տոկարսկու «Հին Հայաստանի ճարտարապետությունը» գրքի առթիվ» (53 էջ): Էպիտետների շարանի հետ միասին (որոնց «հիմնավորման» պարագայում այն տարիներին արքայի կամ գնդակահարություն էր սպառնում) հեղինակը անթաքույց գրում է նման «քննադատության»՝ իր համոզմամբ իրական դրդապատճառի մասին. «Գրքի «մեխը» փորձ է ամբողջ հարավային Վրաստանը, իր բնակչությամբ եւ մշակույթով ներկայացնել իբրեւ այլ ազգային [իմա՛ հայկական Հ.Մ.] աշխարհ» (էջ 11), «այդ հանրահայտ փաստերի նկատմամբ գործադրվող բռնությունը, դրանց ներկայացնելը հրեշավոր աղավաղման տեսքով, Տոկարսկուն պետք է եղել այլ, ո՛չ գիտական նպատակի համար» (էջ 31): Ընդ որում, սա ասվում էր Ն. Տոկարսկու ընդամենը 14 էջանոց մի հատվածի առնչությամբ: Ինչպես նկատում է Տ. Մարությանը, «Օրբելուն մեծ ջանքերի գնով հաջողվեց Ն. Տոկարսկուն Հայաստանից բառիս բուն իմաստով փախցնել՝ «հետքը կորցնելու համար»:

Այո, Տ. Մարությանին հաջողվեց 1978 թ. վերահրատարակել վեց տարի առաջ ոչնչացված գիրքը մի «բայց»-ով. շուրջ 200 էջում ընդամենը մի քանի անգամ գործածելով «Տայք» անունը: Եվս մեկ տասնամյակ անց՝ 1989 թ., առաջին հերթին շնորհիվ Մարությանի հետեւողականության, ինչպես նաեւ բարյացակամ մասնագիտական աջակցության (խմբագիր՝ Էդմոնդ Տիգրանյան, գրախոսներ՝ Մուրեն Երեւյան, Մուրադ Հասրաթյան), լույս տեսավ ռուսերեն «Ճարտարապետական հուշարձաններ. Ջվարթնոց, Ավան, Անիի Աստվածամոր տաճարը...» «անմեղ» վերնագրով մենագրությունը, որի 270 էջից շուրջ 100 էջը նվիրված էր Տայքին (գործածված էր «Խորագույն Հայք» անունը): Վերջապես, միայն 2003 թ. 92-ամյա ճարտարապետին հաջողվեց (երջանկահիշատակ Մեսրոպ արք. Աշճյանի հոգողությամբ) հրատարակել այն տեքստը, որտեղ գրված էր ամեն ինչ՝ սկսած վերնագրից:

Տ. Մարությանը դոկտորական աշխատանքը պաշտպանեց 1992 թ. եւ այո, Պ. Մուրադյանն էր նրա ընդդիմախոսը: Մեկը երեքից: Մյուս երկու ընդդիմախոսները՝ ճարտարապետության դոկտոր-պրոֆեսորներ Վ. Հարությունյանը եւ Լ. Լիսենկոն պակաս

արժանավոր չէին Պ. Մուրադյանից: Նկատեմ նաև, որ դոկտորական աշխատանքը նվիրված էր ոչ թե Տայքի ճարտարապետական հուշարձաններին, այլ Ավանի տաճարին: Եվ վերջապես, ճարտարապետության դոկտորի կոչումը Տ. Մարությանին շնորհեց ոչ թե հարգարժան ընդդիմախոսը, այլ Երեւանի ճարտարապետա-շինարարական ինստիտուտի գիտական խորհուրդը, որի անդամը չէր Պ. Մուրադյանը: Այն ապա հաստատվեց ՀՀ ԲՈՀ-ում: Չեմ կարծում, որ ընդհանրապես թե՛ գիտական, թե՛ մարդկային տեսանկյունից կոռեկտ է ընկալվում, երբ գիտական աստիճան ունեցող որեւիցե հետազոտողի մատնացույց արվի, թե այսինչ անձն է իրեն աստիճան «տվողը»:

Իր խոսքի հաջորդ հատվածում պրոֆ. Մուրադյանը նշեց. «Բայց մեկ ուրիշ բան կա, որ պետք է հանուն ճշմարտության ես ասեմ: Տիրան Մարությանը վրացական այդ բնագիրը՝ Գրիգոր Խանձթեցու վարքը (որ Մատի հրատարակությամբ էր լույս տեսել), առած գալիս էր ինձ մոտ: Ես ասում էի՝ այդ [թերեւս տեքստի ինչ-որ մի հատված Հ.Մ.] հին վրացերեն այս է նշանակում: Նրան ձեռք չէր տալիս: Գնում էր Մուրեն Երեւմյանի մոտ՝ հանգուցյալ ակադեմիկոս: Մուրեն Երեւմյանը բնականաբար նույնն էր ասում, ինչ որ ես էի... Մի տեսակ մտասելեռում կար այնտեղ»: Ճիշտն ասած, ես որ այստեղ «մտասելեռում» չեմ տեսնում: Եթե այդ տարիներին Հայաստանում կար հին վրացերենին տիրապետող ընդամենը երկու մասնագետ, ինչու՞ պետք է առավելությունը նրանցից մեկին տրվեր: Մարությանի մոտեցումը, կարծում եմ իսկական հետազոտողի քննական մոտեցում է. չէ՞ որ ցանկացած խնդիր ուսումնասիրելիս հետազոտողը, այդ թվում եւ աղբյուրագետը, դիմում է բոլոր հասանելի աղբյուրներին: Իսկ Գեորգի Մերչուլի հեղինակած «Երանելի Գրիգոր Խանձթեցու վարքը» առանցքային աղբյուրագիտական հուշարձան է: Նկատեմ, որ թե՛ «Տայքի ճարտարապետական հուշարձանները», թե՛ խնդրին առնչվող մյուս աշխատանքներում Մարությանը «Վարքի» Իշխան տաճարին վերաբերող ընդամենը մեկ հատվածի քննական դիտարկման համար դիմում է թե՛ Ե. Թաղայշվիլու, թե՛ Ն. Մատի թարգմանություններին, անդրադառնում է վրաց հետազոտողներ Գ. Չուբինաշվիլու, Շ. Ամիրանաշվիլու, նաև Ն. Տոկարսկու աշխատություններին: Ամբողջ 18 էջ բազմակողմանիորեն քննարկվում է «Վարքի» այդ հատվածը: Նոր ապա արվում են համապատասխան եզրակացություններ: Այս խնդրում, կարծում եմ, «մտասելեռումն» առկա է Պ. Մուրադյանի մոտ եւ գուցե թե պարզապես արտացոլումն է, ինչպես ասում են, «հին հաշիվների»: Բանն այն է, որ Մարությանը Մերչուլի նշված հատվածի, ինչպես եւ մյուս մեջբերումների թարգմանության հարցում այնուամենայնիվ առավելությունը տվել է ակադ. Ս. Երեւմյանին, ինչի մասին էլ նշել է գրքի 18-րդ էջի տողատակում: Ստացվում է, որ «Վարքի» թարգմանության պարագայում պրոֆ. Պ. Մուրադյանը, ինչպես երևում է, «նույնը» չի ասել, ինչ ակադ. Ս. Երեւմյանը:

Ապա Պ. Մուրադյանը շարունակում է. «Դրանք ամենեւին... Օրինակ, Օշկը կառուցվել է X դարի ավարտին Դավիթ III Կյուրապաղատի օրոք, ինչպե՞ս նա կարող էր հայկական լինել: Մեր, դժբախտաբար հարեւանցի ծանոթություն ունեցող մասնագետները, հարեւանցի, երբեմն հայրենասիրությանն ավելի տեղ են տալիս, քան գիտական ճշմարտություններին»: Այս հատվածի երկրորդ մասին չեմ անդրադառնում թողնելով այն խոսքերի հեղինակի խղճին, իսկ առաջին նախադասության առթիվ նկատեմ, որ այն չի համապատասխանում իրականությանը թե՛ գիտական, թե՛ մեթոդաբանական

տեսանկյունից: Փորձեմ հիմնավորել հնարավորինս համառոտ՝ օգտագործելով հենց Պ. Մուրադյանի հեղինակած, նաև հաղորդման ժամանակ հնչեցրած մտքերը:

Նախ, ինչպե՞ս է որոշվում շինության ճարտարապետական պատկանելության հարցը: Թերևս մի քանի գործոնների համակցությամբ. ո՞վ է ճարտարապետը, ինչպիսի՞ օժտակազմային լուծումներ են օգտագործված, ո՞վ է պատվիրատուն, ի՞նչ լեզվով են արված տաճարի վրայի շինարարական արձանագրությունները, ե՞րբ է այն կառուցվել եւ ու՞մ այսինքն կրոնական ո՞ր ուղղության ներկայացուցիչների եւ, սրա հետ կապված՝ ո՞ր էթնիկ տարրի համար է այն նախատեսված, վերջապես՝ ո՞ր երկրում է այն կառուցված: «Ո՞վ էր Օշկվանքի ճարտարապետը» հարցը չունի միանշանակ պատասխան. Ե. Թաղայշվիլու կարծիքով՝ տաճարի կառուցման ղեկավարն էր տաճարի հարավ-արեւմտակողմի բաց պուստահի վերջին հաստաբետ սյան ութ քանդակազարդ նիստերից մեկի վրա ծնկաչոք, աղոթողի դիրք ընդունած քանդակի մոտ կարմիր ներկով վրացերեն գրվածքում հիշատակված «Գրիգորը», նրա օգնականներն էին վանականներ «Միքելը» եւ «Հովհաննը»: Մ. Բրոսսեի կարծիքով այդ նույն «Գրիգոր»ն էր տաճարը կառուցող ճարտարապետը: Մարտիանը վիճարկում է այդ կարծիքները՝ ելնելով այն մտտեցումից, որ ճարտարապետի քանդակը դժվար թե տեղադրվեր տաճարի արեւելյան ճակատում, նրա ամենաբարձր մասում, որտեղ միայն սրբերի եւ սրբերի շարքն անցած մեծավորների պատկերներ են տեղավորվում, կամ այնտեղ ուղղակի խաչ է քանդակվում: Նման տեղ հատկացնել ճարտարապետի քանդակին, այն էլ այն դեպքում, երբ շատ ավելի համեստ տեղ է հատկացված Բագրատին ու Դավթին [վանքի կառուցման պատվիրատուներին Հ.Մ.] ու նրանց միջեւ՝ Աստվածամոր եւ երկու այլ սրբերի պատկերներին, հեռու է հավանականությունից» («Հայ դասական ճարտարապետության ակունքներում», էջ 289-290. այսուհետեւ հղումները, բացի հատուկ նշված դեպքերից, կբերվեն այս աշխատանքից): Հատակազմային լուծումների մասին. «հատակազմային կոմպոզիցիան Օշկվանքում ստեղծվել է նախօրինակ ունենալով Իշխանը [կառուցված Տայքի եպիսկոպոս, սպա Հայոց կաթողիկոս Ներսես III կողմից VII դարում]: Տաճարը հետագոտող Ե. Թաղայշվիլին Օշկ տաճարի հատակագիծը, որոշ տարբերություններով հանդերձ, համարում է Իշխանի տաճարի հատակագծի կրկնությունը» (էջ 288):

Վերոբերյալ մյուս հարցադրումները կազմում են մեկ ամբողջություն, ուստի կփորձենք դրանց անդրադառնալ միասնաբար, բայց քանի որ խնդիրը բազմաշերտ է՝ հնարավորինս համառոտ: Հայտնի է, որ Օշկվանքը եղել է Տայքի հայ քաղկեդոնական համայնքի հիմնական եկեղեցին, կառուցված Ադրներսեհ Գ-ի որդիներ՝ իշխանաց իշխան Բագրատի եւ մագիստրոս, հետագայում Մեծ կյուրապաղատ Դավթի կողմից X դարի երկրորդ կեսում, թերևս 966-976 թթ. (էջ 287): Ստեփանոս Ասողիկի ձեռագրումը «կիրապաղատն Հայոց Դավիթը» (960-1001) X դարի վերջում դառնում է ամենագեղեցիկ դեմքը հայ եւ վրաց իշխանների մեջ: Ի՞նչ ազգության էր պատկանում Դավիթ Մեծը: Այս հարցը չունի միանշանակ պատասխան, քանի որ նրա ապրած ժամանակներում այդպիսի հարցը թերևս այլ կերպ էր դրվում: Հարցի պատասխանի որոնումներում ժամանակին՝ շուրջ կես դար առաջ, մեծ պարզություն է մտցրել հենց Պ. Մուրադյանը: Դեռևս 1962 թ., ուսումնասիրելով 1958 թ. Մխիթարյան միաբանության գիտնական Ն. Ակինյանի հայտնաբերած ու հրատարակած «Զրոյցք եւ խաւսք առաջի թագաւորացն եւ իշխանացն, գորք թարքմանեցին Դավիթ Կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լեզուէ» աղբյուրը, Պ.

Մուրադյանը պարզում է, որ այն՝ «Պղնձե քաղաքի պատմությունը» Դավիթ Մեծ կյուրապաղատի պատվերով արաբերենից թարգմանվել է հայերեն, որ այն պատմվի արքունիքում ի զվարճություն թագավորների եւ իշխանների: Ուրեմն, Տայքի ոչ միայն ժողովուրդը, այլև Դավիթ Մեծ կյուրապաղատը, իր պալատականներն ու իշխանները, նույնպես եղել են հայախոս հայեր» (էջ 245): Բյուզանդիային անցնելուց հետո էլ Տայքի բյուզանդական կառավարիչ էր նշանակված հայազգի Գրիգոր Բակուրյանը, որը շատավիղն էր Տայքի Մամիկոնյան-Թոռնիկյան տան (էջ 242):

Այո, Տայքում տիրող քրիստոնեական ուղղությունը քաղկեդոնականությունն էր, կամ, այլ կերպ ասած՝ ուղղափառ քրիստոնեությունը: Ուղղափառ հայ քրիստոնյաներին հայոց պատմագրության մեջ ընդունված է անվանել այն կրող հարեւան ժողովուրդների անուններով՝ հունադավան կամ վրացադավան: «Վրացադավան» եզրը պատմության ընթացքում շատ հաճախ, ընդհուպ մեր օրերը, նույնացվել է «վրացի» այսինքն՝ էթնիկ հենք կրող հասկացության հետ: Սրան նպաստող հանգամանքներից էր նաև այն, որ Հայ Առաքելական եկեղեցին իրենից միանշանակ վանել է քրիստոնեության ուղղափառ ճյուղի հետեւորդներին, ինչը եկեղեցական կառույցի՝ օտար ներթափանցումների դեմ պայքարելու համար գուցե եւ ընդունելի ձեւ էր (այս հարցի քննարկումը դուրս է մեր խնդիրներից): Իսկ քանի որ միջնադարում «հայ-քրիստոնյա» հասկացությունը նույնացվել է «Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ հայազգի անձնավորություն» հասկացության հետ, էթնոմշակութային գործընթացները գնացել են ոչ-առաքելականներին ինչպես շրջապատի, նույնպես գուցե թե ուղղափառների կողմից իրենք իրենց՝ «վրացի» կամ «հույն» հորջորջելու, բնութագրելու, ընկալելու ուղղությամբ: Հայաստանի արեւմտյան գավառներում քաղկեդոնականություն ընդունած հայերին անվանում էին «հոռոմ», որ հումանիշ է «հույն» հասկացության: Այդ նույն ձեւով ասորիների (սիրիացիների) շրջապատում քաղկեդոնականություն ընդունած հայերին անվանում էին «մելքիտներ»: Նույն կերպ եւ XIX դարի առաջին տասնամյակներին հայ-կաթոլիկների մի սովոր գանգված, պատկերավոր ասած՝ «հակադրվելով հակադրմանը»՝ աստիճանաբար անցել են վրացերենին, փոխել իրենց ազգային պատկանելությունը, դարձել «վրացի-կաթոլիկներ»: Մեր օրերում լայն քննարկումներ են գնում մուսուլմանություն դավանող հայերի թեմայի շուրջ եւ, փառք Աստծո, կշեռքի նժարը թեքվել է դեպի այն կողմը, որ նրանք այսօր առավելապես ընկալվում են որպես հայեր (հաղորդման ընթացքում այս ձեւակերպումը հնչեց Ջ. Սարգսյանի խոսքում): Այո, այս վերջին միտքը (ինչին նախորդել են՝ հատկապես վերջին տարիներին, մի շարք մենագրություններ, նաև բազմաթիվ հրապարակումներ գիտական ու գիտահանրամատչելի պարբերականներում) հնչել է նաև ՀՀ Նախագահի խոսքում հետեւյալ ձեւակերպումներով. «Հայի ինքնությունը չպետք է լինի բարդ եւ խորհրդավոր, այն պետք է հրաժարվի լեզվական, կրոնական, մշակութային, կուսակցական կամ գաղափարական տարանջատումներից: Անգլիախոս, թուրքախոս, ռուսախոս կամ հայախոս հայը, առաքելական, կաթոլիկ, բողոքական կամ մահմեդական հայը, սոցիալիստ կամ ժողովրդավար հայը, ազատական կամ ազգայնական հայը՝ պարզապես հայ է: Հայկական ինքնությունը չպետք է սահմանափակվի ինքն իր «ճշմարիտ» հատվածի մեջ ու պարփակվի՝ փորձելով պահպանել ինքնամիտփ անաղարտությունը: Հարատեւման բանալին բազմազանությունն է, իսկ բնության անաղարտ տեսակները դատապարտված են» («Երկիր», 25 սեպտ., 2008):

Իսկ կրոնական պատկանելության ցուցումից զատ ի՞նչ այլ պատմական տվյալներ են առկա Տայքի քաղկեդոնականներին բնութագրելու հարցում: Բերենք միայն մի քանի օրինակներ: Այսպես, «Գրիգոր Խանձթեցու վարքի» առաջաբանում Ն. Մառը (ով հաղորդման ընթացքում մի քանի անգամ հիշվեց Պ. Մուրադյանի խոսքում) գրում է. «Դեռևս X դարի կեսում, երբ Գեորգի Մերչուրը գրում էր, համաձայն «Վարքում» եղած ակնարկի՝ վրացերենը Կղարջքում բնակչության լեզու չէր, եկեղեցական էր»: Մեկ այլ աշխատության մեջ, հիմնվելով վրացական իսկ աղբյուրներին, Ն. Մառը գրում է. «IX եւ, նույնիսկ X դարում վրաց վանականները Տայքում եւ Կղարջքում շրջապատված էին թեպետեւ նույն հավատքն ունեցող, սակայն այլազգի՝ հայ բնակչությամբ» (էջ 245): Նկատենք, որ սկադ. Երեմյանի դիտարկմամբ, «պատմական տվյալներով հիմնավորված է, որ այդ վանականները քաղկեդոնական հայեր են եղել եւ ոչ վրացիներ» (էջ 245): Անուղղակիորեն սա հաստատող փաստարկներ բերեց նաեւ Պ. Մուրադյանը, երբ նշեց, որ Տայքի վանքերում գրված հին վրացերեն ձեռագրերում «Երբեմն լուսանցքներում պատահում է, որ այդ վրացի գրիչը որեւէ բառ տառադարձում է հայերեն կամ իր հայերենի իմացությունն է ուզում ցույց տալ: Բայց այդ քաղկեդոնական հայերը այնտեղ երկար ժամանակ կային. դրա լավագույն ապացույցը Հայոց Վարք Սրբոցի թարգմանությունն է: Հայերն իրենք թարգմանեցին հայերենից վրացերեն Հայոց Վարք Սրբոցը: Թարգմանեցին, որպեսզի տեղյակ լինեն հայրենի ավանդներին: Չի նշանակում, թե հայ բնակչությունը դադարեց գոյություն ունենալուց»: Ու միանգամայն անհասկանալի է, թե ինչու պատմական տվյալների այս հենքի առկայությամբ Պ. Մուրադյանն այնուամենայնիվ եզրակացնում է. «Բայց վանական հաստատությունները այլևս վրացական էր», կամ էլ հաղորդման սկզբում վարողի այն դիտարկմանը, թե «կա մի վարկած, որ Տայքի վրացիները դա իրականում ուղղափառ, քաղկեդոնացի[ական] հայերն են՝ պատասխանում է «չէ, չէ, չէ, դա ոչ մասնագիտական գրույց է»:

Տայքի ազգաբնակչության միայն մի մասն էր քաղկեդոնական (գլխավորապես վերնախավը), մյուս մասը լուսավորչական էր (էջ 245) (այս մասին նշեց նաեւ Պ. Մուրադյանը): Մարությանն ընդունելի չի համարում Ն. Մառի այն դիտարկումը, որ «ազդեցության ոլորտի համապատասխան քաղկեդոնական հայերը սկսեցին ձուլվել վրացիներին, հույներին կամ սիրիացիներին» եւ XI դարում «այդ երկրամասի քաղկեդոնական հայերն իրենց արդեն համարում էին բնական վրացիներ, թեպետ դեռևս պահպանում էին հայ գրագիտությունը»: Բանն այն է, որ էթնիկ ձուլման գործընթացները միշտ եւ ամենուրեք չէ, որ արագ են ընթանում: Տայքի պարագայում ունենք էրզրումի հայոց միաբան Հակոբ Կարնեցու վկայությունը նկարագրվող երեւոյթներից 600 տարի անց XVII դարում: Նա գրում է. «Եւ կայ ի մէջ ձորոյն մեծամեծ վանորայք Վրացի գուղն Խախու, Ոջկ եւ Իշխան, որ յար եւ նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբն Սոփի ի Կոստանտնուպոլիս: Եւ էին բնակիչք երկրիս կեսն Հայք եւ կեսն ազգաւ եւ կրօնին Վրացի, բայց Հայի լեզուաւ խօսէին...» (էջ 246): Ինչպես տեսնում ենք, Հակոբ Կարնեցին, հետեւելով հայոց պատմագրության ավանդույթներին, «վրացի» է անվանում Իշխանանիստ ձորի (Ճորոխի հովիտ) այն բնակիչներին, որոնք «կրօնով վրացի» էին, բայց խոսում էին հայերեն: Ատրպետի դիտարկմամբ, «Կրօնափոխութիւնը, լեզուի փոփոխութիւնը Տայեցի կալուածատէր իշխանի համար տարազի նման է եղել, հետեւել է իշխողներին, բայց ո՛չ մի կրօն այնտեղ հիմունք չէ գտել. նա միմիայն հպատակութեան ձեւ է, ուրիշ ոչինչ» (էջ 245-

246): Նույն Ատրպետը XIX դարավերջում հավաքել է ու իր աշխատանքում հրատարակել Տայքի բնակիչների գործածած տասնյակ հայերեն բառերը (էջ 291):

Այո, Տայքի հուշարձանների արձանագրությունների զգալի մասը վրացերեն է: Եվ դա բնական է, քանի որ Տայքի քաղկեդոնականները, գտնվելով Վրաստանի քաղկեդոնականության ազդեցության ոլորտում, իրենց որոշ եկեղեցիներում արարողությունը կատարում էին վրացերեն: Հասկանալի է, որ հայ համայնքի համար կառուցված այդ նույն քաղկեդոնական եկեղեցիներում էլ արձանագրությունները պիտի գրվեին վրացերեն: Ընդ որում, դրանք գերազանցապես ոչ թե փորված են, այլ ուղղակի գրված են քարի վրա սեւ կամ կարմիր ներկով: Այսպես, քննարկման առարկա Օշկվանքում Ե. Թաղաշվիլու վկայությամբ, «քարին փորագրված արձանագրությունները միայն երեքն են», մնացածները ներկով են: Իբրև այդ երեւոյթի բացատրության փորձ կարելի է մեկնաբանել Տայքի հուշարձանների արձանագրությունները XIX դարի կեսերին հավաքած ու հրատարակած միխթարյան միաբան Հ. Ներսես Սարգսյանի Օշկվանքին վերաբերող այն դիտարկումը, թե «յարձանագրած եկեղեցւոյն շատք եղծեալ են [փչացած են]», բայց ոչ թե չարանենգորեն, այլ քանի որ «ի կակուղ քարանց» են կառուցված (էջ 244):

Տայքի մյուս հուշարձանների (Բանակ, Իշխան, Խախու, Չորդվան, Պարխար) կառուցման ժամանակի եւ ճարտարապետական առանձնահատկություններին չենք անդրադառնում տեղի սղության պատճառով: Նշենք միայն, որ այդ խնդիրները հանգամանորեն քննարկված են Տիրան Մարությանի վերոնշյալ աշխատությունում: Պ. Մուրադյանը, որքան մեզ հայտնի է, երբեւիցե գրավոր չի անդրադարձել Տայքի հուշարձաններին, չի գրախոսել Մարությանի աշխատանքները, ինչի հնարավորությունը նա անցած քառասուն տարվա ընթացքում, վստահաբար, ունեցել է: Անցած տասնամյակներին Տայքի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությունը հայոց մեջ, ցավոք, շարունակություն չունեցավ (բացառությամբ Հարություն վրդ. Պզտիկյանի «Տայք - Բարձր Հայք. վրացական թէ՞ հայկական (ճամբորդական նոթեր)» 2005 թ. լույս տեսած գրքի): Փոխարենը վրաց գիտնականները տպագրեցին բազմաթիվ աշխատություններ նաեւ օտար լեզուներով, Վրաստանի նախագահի գովազդային պաստառներին որպես ֆոն ծառայում են Տայքի հուշարձանները («Ազգ», 4 ապրիլի 2005 թ.), իսկ անցյալ տարվա հոկտեմբերին էլ Թբիլիսիում հրավիրվեց «Տառ-Կլարջերթին» նվիրված միջազգային գիտաժողով, որտեղ զեկուցումով հանդես եկավ նաեւ պրոֆ. Պ. Մուրադյանը:

Գուցե ժամանակն է, որ մենք էլ, չվախենալով հարցի շուրջ «հարեւանցի ծանոթության» եւ «հայրենասիրության» մեջ մեղադրվելուց՝ «տեղներիցս շարժվենք», որպեսզի հանրությանը կարողանանք մատուցել ավելի «ստույգ» տեղեկություններ:

փետրվար, 2011 թ.

<http://www.azg.am/AM/culture/2011030501>